Հաշվետվություն

2019 թվականի ապրիլի 22-25-ը Ռուսաստանի Դաշնություն (ք. Սոչի)
գործուղման արդյունքների մասին

1. **Անուն, ազգանունը՝**
   Էդգար Խուրշուդյան
2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար
3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Քաղաք Սոչի, Ռուսաստանի Դաշնություն, 22-25 ապրիլի 2019թ.
4. **Հրավիրող կողմը՝**
   ՌԴ աշխատանքի և զբաղվածության դաշնային ծառայություն
5. **Գործուղման նպատակը՝**
   Մասնակցել աշխատանքի միջազգային կազմակերպության 100-ամյակին նվիրված՝ «Աշխատանքի պաշտպանության հինգերորդ համառուսական շաբաթ» միջոցառումներին, ինչպես նաև 2019 թվականի ապրիլի 23-ին ԱՊՀ մասնակից երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի կոնֆերանսին, իսկ ապրիլի 24-ին՝ աշխատանքի պաշտպանության և անվտանգության նորմերին աշխատանքի տեսչությունների գործունեության համապատասխանության վերաբերյալ ուսուցողական սեմինարին:
6. **Քննարկված թեմաները՝**
   ԱՊՀ երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի (այսուհետ՝ Դաշինք) կոնֆերանսին հնչեցին զեկույցներ մասնակից երկրների կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև աշխատանքի ոլորտում պետական վերահսկողության օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ: Խոսվեց Դաշինքի գործունեության և զարգացման հեռանկարների, աշխատանքի տեսչության ազգային համակարգում փոփոխությունների և գործունեության փորձի մասին: Ներկայացվեց աշխատանքի տեսչությունների վերաբերյալ ԱՄԿ

ընդհանուր ռազմավարությունը, աշխատանքի տեսչությունների գործունեության ռազմավարական պլանավորման և աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման վերաբերյալ ԱՄԿ մոտեցումը:

Աշխատանքի տեսչությունների միջազգային ասոցիացիայի կողմից ներկայացվեց «Աշխատանքի անվտանգության և հիգիենայի նորմատիվ փաստաթղթերի միջազգային համեմատական վերլուծություն» (այսուհետ՝ IBOR) ծրագիրը և ծրագրի իրականացման համար մշակված ստուգաթերթերը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Դաշինքի կոնֆերանսին ողջույնի խոսքով հանդես եկան ՌԴ աշխատանքի և զբաղվածության դաշնային ծառայության ղեկավար Մ.Յ. Իվանկովը, ՌԴ աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարի տեղակալ Գ.Գ. Լեկարեվը, Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) գլխավոր տնօրեն Գայ Ռայդերը:

Լիագումար նիստին հնչեց Աշխատանքի և զբաղվածության դաշնային ծառայության ղեկավարի տեղակալ, Աշխատանքի տեսչությունների միջազգային ասոցիացիայի փոխնախագահ Ի.Ի.Շկլովեցի ողջույնի խոսքը, աշխատանքի ոլորտում պետական վերահսկողության վերջին փոփոխությունների վերաբերյալ զեկույցը և ներկա փուլում աշխատանքի տեսչությունների մարտահրավերներն ու հնարավորությունները:

Ելույթով հանդես եկավ ԱՄԿ աշխատանքի պաշտպանության և աշխատանքի տեսչության գլխավոր մասնագետ Վալենտին Մոկանուն, ներկայացնելով աշխատանքի տեսչությունների վերաբերյալ ԱՄԿ ընդհանուր ռազմավարությունը, ԱՄԿ-ի մոտեցումը աշխատանքի տեսչությունների գործունեության ռազմավարական պլանավորման վերաբերյալ՝ ապահովելով աշխատանքային օրենսդրության պահանջների կատարումը: Վերջինիս հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին ԱՄԿ-ի և ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի միջև համագործակցության վերաբերյալ հարցեր:

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Էդգար Խուրշուդյանը հանդես եկավ ողջույնի խոսքով և Աշխատանքի միջազգային

կազմակերպության 100-ամյակին նվիրված ուղերձով: Այնուհետև ներկայացրեց զեկույց՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2019 թվականի գործունեության և կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ:

ԱՊՀ մասնակից երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի անդամները հանդես եկան աշխատանքի պետական տեսչության ազգային համակարգում փոփոխությունների, գործունեության փորձի և զարգացման հեռանկարների վերաբերյալ իրենց ելույթներով:

«IBOR» ուսուցողական ծրագրի ներկայացման շրջանակներում բացման խոսքով հանդես եկան Աշխատանքի տեսչությունների միջազգային ասոցիացիայի նախագահ Կեվին Մայերսը, Աշխատանքի և զբաղվածության դաշնային ծառայության ղեկավարի տեղակալ, Աշխատանքի տեսչությունների միջազգային ասոցիացիայի փոխնախագահ Ի.Ի.Շկլովեցը, ԱՄԿ աշխատանքի պաշտպանության և աշխատանքի տեսչության գլխավոր մասնագետ Վալենտին Մոկանուն:

Աշխատանքի տեսչության միջազգային ասոցիացիայի նախագահ Կեվին Մայերսը ներկայացրեց «IBOR» ծրագրի սկզբունքները, պահանջները, գնահատման արձանագրությունը, որից հետո տեղի ունեցավ քննարկում հարց ու պատասխանի տեսքով:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.**

Օրակարգի 1-ին կետ.

Աշխատանքի և զբաղվածության դաշնային ծառայության ղեկավարի տեղակալ, Աշխատանքի տեսչության միջազգային ասոցիացիայի փոխնախագահ Ի.Ի.Շկլովեցի կողմից ԱՊՀ մասնակից երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի 2019 թվականի աշխատանքային ծրագրի նախագծի ներկայացում:

Հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.

Դաշինքի 2019 թվականի աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումների ցանկն ամփոփել և աջարկությունները ներկայացնել Դաշինքի գործադիր կոմիտե:

Օրակարգի 2-րդ կետ.

Դաշինքի գործունեության և զարգացման հեռանկարների վերաբերյալ քննարկումներ և առաջարկություններ:

Հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.

Դաշինքի գործունեության և զարգացման հեռանկարների վերաբերյալ քննարկումներն ամփոփել և առաջարկությունները ներկայացնել Դաշինքի գործադիր կոմիտե:

Օրակարգի 3-րդ կետ.

ԱՊՀ մասնակից երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի անդամների զեկույցներ՝ աշխատանքի ոլորտում պետական վերահսկողության վերջին փոփոխությունների վերաբերյալ:

Հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.

Դաշինքի մասնակից երկրների զեկույցներն ընդունել ի գիտություն:

Աշխատանքի տեսչությունների միջազգային ասոցիացիայի կողմից ներկայացված «IBOR» ծրագրի իրականացման համար մշակված ստուգաթերթերի ներկայացում, քննարկում, կարծիքների փոխանակում:

Հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.

Ստուգաթերթերի հարցաշարերի վերաբերյալ քննարկումներն ամփոփել և առաջարկությունները ներկայացնել Աշխատանքի տեսչությունների միջազգային ասոցիացիա:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

ԱՊՀ մասնակից երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի 2019թ. աշխատանքային ծրագրի հաստատում

և «IBOR» ծրագրի իրականացման համար մշակված ստուգաթերթերի հարցաշարերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

10. **Գործուղվողը, ստորագրությունը, ամսաթիվը՝**

    Էդգար Խուրշուդյան

    30.04.2019թ.